

1891

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆՌԻՍԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ԻՔ

ՆՈՅԵՄԲԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆՔ

ՈՒՐՈՒԱԳԻԾՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ԹԵՂՈՍԻԱ-ԿԱՖԱ ՔԱՂԱՔԻՆ ՏԱԻՐԻՈՑ
ԵՒ ՀԱՅՈՑ ԳԱԼԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ



ՍՈՒՐՂԱԹ, ՔՐՈՂԵՄ ԵՒ ԿԱՖԱ ԱՆՈՒԱՆՑ ԾԱԳՄԱՆ ՎԵՐԱՑ

(Տես թէջ 145)



Կաֆայէ երեք ժամ հեռի, 26 վերստ գէպ 'ի արևմտեան-հա-
րաւ, լեռներուն մէջ գտնուած փոքր քաղաքը, որ այժմ
Հին-Ղրիմ անունը կը կրէ, առ Գենուացւովք Սուրղաթ
կոչուած է. նոցամէ առաջ և վերջը մինչև մեր օրերը,
չառ Հայեր բնակած են այդ քաղաքին մէջ: Յ' թ. Գ. դարու ալ թա-
ւաթարաց խաներուն մայրաքաղաք եղած է, որոց փողերանոցին և
պալատներուն մնացորդք մինչև վերջին ժամանակներս կեցած էին,
այլ այժմ հետախաղաղ կորան: Ի հնուց նշանաւոր և մեծ քաղաք
եղած է. մեր ձեռագիրք իբրու յատկանիշ կը գործածեն իոյակապ
ածականը. թաթարք ևս թ. Գ. դարէ սկսեալ, իրենց լեզուով նոյն

ածականը տուած են Սուրդաթի¹⁾։ Ժամանակաւ հոյակապ եղած ըլլալուն տարակոյս չկայ։ Ղի մեծ տարածութեամբ ցրուած կը տեսնուին ցիր և ցան դերբուկք և մնացորդք հին շինուածոց, որոց մէջ նշանաւոր են ազգային հայեցակիտիւ, Զար-խափան Աստուածամոր եկեղեցւոյն աւերակք։ Համանուն կամրջին մօտ, և այլ դերբուկք բաղանեաց և մկիթից, նոյնպէս և ստորերկրեայ լայն քարուկիր անցքեր, քաղաքին երբեմն հոյակապ լինելուն ապացոյցքն են²⁾։ Սմիրնով պրոֆեսսորը, Պետրբուրգի հնագիտական յիշատակարանաց մէջ³⁾ քաղաքիս Սուրդաթ անունը, աղաւաղմունք կը համարի հայ Ս. Խաչ բառերուն, Ղի մօտ է քաղաքիս վաղեմի հայկական Ս. Խաչ (Ս. Նշան) վանքը⁴⁾։ Եւ որովհետեւ Հայք յառաջ եկած են այս կողմերս քան զԳենուացիս, յոյժ հաւանական է որ Սուրբ Խաչ բառերուն աղաւաղմունք լինի Սուր-դաթ։ Անշուշտ սկզբան Գենուացիք այդ հայ բառերը իրենց կամ լատին լեզուին տառադարձութեան կա՛նով գրած են Surb-ghatch, և ժամանակ ա ցնելէն յետոյ այս բառերուն մէջէն քանի մի բաղաձայն թօթափելով մնացել է Sur-gat, Նոյն միջոցներ գրուած մագաղաթի թերթ մի, որոյ վրայ հայերէն երկաթագիր գրուած տեսայ լատին պատարագամատոյցի մի մասը կը հաւաստէ թէ այն միջոցին դեռ լատին լեզուին մէջ չկայ Չ տառին հնչումը։ Ղի գրած գտայ գլորիս ին էկսցէլսիս, Չ տեղ Ս տառը այսինքն ոչ էկսլէլսիս։ Զարմանք չէ, այլ մանաւանդ շատ բնական, որ հայ անունը, անցել է առ Գենուացիս։ Բաց յայսմանէ դեռ քանի տեղ Ղրիմու մէջ իբրև տեղւոյ անուն, հայ բառեր կը գործածուին, ինչպէս Օր քաղաքը (տիւ նշանակութեամբ)։ Ղի ցամաքէն Ղրիմ մտնողին, դէպ արեւելք կ'ինկնայ։ Հարաւայի՝ ափանց վերայ Ալուշթայի մօտ փոքր ջրվէժ մի կայ որ ցարդ Զուր-ջուր անունը կը կրէ։

Այլ մեք դառնանք դարձեալ առ Ս. Խաչ (Սուրդաթ)։ Երբ դարուն երկրորդ կիսուն մէջ այս քաղաքը իւր հին հայահնչուն անունը կը փոխէ և կը լինի Քըռըմ կամ Խըռըմ, Գիտնոց մօտ քար գայթակղութեան եղած է այս անունը, և ցայսօր ոչ ոք չէ կարողացած գոհացուցիչ մի մեկնութիւն տալ։ Այս պարզ և համառօտ անուանց մեկնութիւնը գտնալու համար, ոմանք ի գիտնոց բաղմադարեան հնութեան մէջ թարթափելով կը հասնին մինչև Նախալըր-հեղեան Նահապետին Նոյի, և նորա թոռան Գամբերի անուան մէջ

1. Սիրայ հոլուած։

2. Արեւմտեայց մասին մէջ 273, 1887 ին։

3. Աւերակէն Զար-խափանի գնեց մօտերս տիկին Աննա Ալազեան և մագդիր է նորոգել այս սրբազան յիշատակը։

նմանաձայնութիւն մի հեռուէն գտնալով, աղաւաղմունք կը համարին քրոքըմ բառը Գամիւր անուան. ոմանք ալ քիմիներեան վոսովորէ ծագած կամ յառաջ եկած կ'ուզեն ցուցանել: Այլք աւելի մերձաւորապէս դիտելով տեղւոյն դիրքը, որովհետեւ լայն խրամի հետքեր դեռ եւ կը նշմարուի քաղաքին չորս պողոտք, (տաճկերէն հէնտէք կամ իւնտէկ) նոյն բառէն ծագած կը համարին քրոքըմ անունը. այս կարծիքէն է Ռուսաց մեծանունդ պատմագիրը Փառամզին: Անցեալ դարու գրուած ազգային մի յիշատակարան, խօսելով Անեցի գաղթականաց մասին, կը յաւելու թէ Հայ գաղթականաց մի մասը կաֆայէ դէպ արեւմտեան — հարաւ գնալով բնակութիւն հաստատած են «ի Ղոբիմ» = լեոնամիջի ». մեք այս երկրորդ բառը ոչ իբրեւ ածական կ'առնուով Ղոբիմի, այլ իբրեւ թարգմանութիւն Ղշիմ, խրաքըմ կամ քրա բառին՝ որ ի թաթար լեզու բլուր կը նշանակէ: Եւ աստի կ'ուզեմք հետեցնել որ քրոքըմ անունը, որ այժմ կը կրէ Տաւրիա կամ տաւրիական թերակղզին, ոչ ի Գամիւրէ, ոչ ի քիմիւրէ եւ կամ խրամ հէնտէկ բառերէն ծագած կամ յառաջ եկած է, այլ թաթար լեզուի քրա բլուր կամ լեռ բառէն: Եւ յիշուի, եթէ մէկը ուշի ուշով քննէ թերակղզւոյս պատմական ընթացքը, եւ հետագոտ ակնարկ մի տայ, այժմեան Հին-Ղրիմ քաղքին դրիցը, եւ ապա սակաւ մի տեղեկութիւն ունենայ թաթարաց լեզուին, կարծեմ գծուարութիւն չի կրել հաւանելու մեր տուած մեկնութեան:

Թաթարաց պատմութիւնը մեզ կ'աւանդէ որ՝ զկնի մահուան իսփշաղաց նշանաւոր Բաղու խանին 1255 ին, յաջորդել է նմա ի խանութեան Բերեկա կամ Բուրգա՝. սորա յաջորդը Մանգու թիմուր, ի կենդանութեան կը բաժանէ իւր խանութիւնը ժառանգաց մէջ. այս առթիւ այժմեան Հին-Ղրիմ (առ Գենուացւովք Սուրդաթ) նոյն եւ ծովահայեացն կաֆա, մասն կամ ժառանգութիւն կ'ինկնան Օրան-թիմուրի. այս բաժանմունքը կը պատահի 1266 փրկչական թուականին: Սորա՝ Օրան-թիմուրի իշխանութեան միջոց առաջին անգամ ի պատմութեան կը լսուի քրաքըմ բառը, յատկացեալ տեղւոյ, այն է Աղարմըշ լեռին ստորոտը չինուած քաղաքին, այլ ոչ բովանդակ թերակղզւոյն. որոյ վերջը յատկացել է Ղրիմ անունը, փսխանակ Տաւրիոյ:

Աղարմըշ (սպիտակափառ) լեռին ստորոտը գտնուած քաղաքը, չըլապատուած է անտառազարդ բլուրներով. օդը առողջարար, ջուրը քաղցրահամ. մեր ձեռագրին Ղշիմ լեռնամիջի բացատրութիւնը, շատ յարմարաւոր է:

1. Հոտ ազգային պատմաց:

Արդ մեք կ'ենթադրեմք որ հայկական Ս. Խաչին և Գենուա-
ցոյց Սուրդաթի, նոր իշխեցողը Օրան-թիմուր, փոխելով տե-
ղոյն անունը, կոչած է Քրաքըմ, անելով զայն իւր խանութեան մայ-
րաքաղաք. և այն ոչ մասնաւոր դիտմամբ, այլ յոյժ բնական կեր-
պով, եւ յիրաւի, Օրան-թիմուր նախամեծար համարելով Աղաբ-
մըշի գիւրքը, կանաչազարդ բլուրներով, — քան զծովահայեացն
կաֆայի — ուր և հաստատած է իւր աթոռը, հարկաւ չէր կարող
գոհ լինել հայացի Ս. Խաչ անունով կամ նորա մողաւադմամբ (Սուր-
դաթ), այլ իւր սրտին և թաթար լեզուին յատկութեանց համե-
մատ, պէտք էր մի նոր յորջորջումն տալ իւր մայրաքաղաքին. և
ահա նա կը կոչէ զայն Քրուրմ, այսինքն՝ իմ լեռն, կամ լեռտն իմ.
որ համաձայն է սրտի զգացմանց նոր իշխեցողին և յատկու-
թեանց թաթար լեզուին:

Խրու կամ քրու բառը կը նշանակէ բլուր. ինչպէս արդէն յայտնի
է փոքր ի շատէ ամենայն արեւելագիտաց ըմ, իմ, ոչմ՝ մասնիկ-
ները կը նշանակեն, իբրու ստացական գերանուն իմ, օրինակի
համար պաղըմ (իմ այգիս), էվիմ (իմ տունս), օղլու (իմ որդիս).
կամ այսպէս զրուցենք, այդ վերոյիշեալ մասնիկերը մեր լեզուին ու
գիմորոյին տեղ կը գործածուին թաթարաց լեզուին մէջ. որով
եթէ երկու մասն բաժնեմք քրուրմ բառը՝ կը գտնեմք, քրու (լեռ)
և ըմ (իմ), իմ լեռն. և հա այդ անունը ժ.գ. դարէ և այս փոխա-
նակած է Սուրդաթ քաղաքին անուան, և մինչև ցայսօր ևս կը
կրէ: Որպէս նախընթաց դարուն վերջերը տիրելով Տաւրիոյ, առ
հասարակ նշանաւոր քաղաքաց նախնի հին յունական անուններ
տուել են, ինչպէս Սեւաստոպոլ, Սիմֆերոպոլ, Եւպատորիա, Թէո-
դոսիա: Այլ Սուրդաթ ունեցած չէ վերանորոգման պատիւը. նա
միայն մեր ազգային յիշատակարանաց մէջ հղական մակդիրովը
գոհ կը լինի, տեղի տալով Քրուրմ թաթարահնչիւն անուան: Այս
յիշած անուանափոխութեան խնդիրս, ըստ իմ կարծեաց, յոյժ
հաւանական և ամենաքննական է. նմանօրինակ փոփոխութիւնք տե-
ղերու անուանց, կամ սրտամերձ և հաճոյական բացատրութիւնք,
քաղաքակիրթ ազգաց մէջ ևս կը գտնեմք, ինչպէս mon-plaisir, mon
souvenir (իմ հաճոյք, կամ յուշք), Хотелъ ехавъ (նոր աշխարհք):
Տակաւ Քրուրմ՝ Օրան-թիմուրի մայրաքաղաքին անունը, նորա
իշխանութեան կամ բաժնին վերայ տարածուած է, յետոյ և ևս
ընդարձակուելով, բովանդակ տաւրիակա՝ թերակղզոյն յատուկ
անունը եղած է Քրուրմ. և որպէս զի մասը բոլորէն զանազանուի,
Օրանի մայրաքաղաքին վերայ եսկի (հին) ածականը աւելցուցած
են: Սակայն զրիմեցի թաթարք ցայսօր առանց եսկի ածականին
կը գործածեն Քրուրմ անունը Սուրդաթի տեղ, և Բազար անունը

կու տան խարասուի, և չեն կոչել ըստ Ռուսաց սովորութեան խարասու-Քազար:

Մեզ այնպէս կ'երևի, որ վերը գրուցածներս բաւական համողիչ մեկնութիւնք են ֆրոլմանուան թէպէտև մեր նպատակէն դուրս էր ճոխանալը մի թաթար անուան վերայ, քանզի այդոր մէջ չկայ մի հայացի հայեցակէտ, նա մանաւանդ թաթար իշխեցողին կամքը նսեմացուցել է Ս. խաչ հայկական շքեղ անունը, այլ որովհետև մեզ մի պատմական ստուգութիւն երևցաւ այս տուած մեկնութիւննիս, և որովհետև ազգիս երկրորդ հայրենիք եղել են այս տեղուանք յընթացս շատ դարերու, այն պատճառաւ մեզ իբր ստուգութիւն երևցածը կարևոր համարեցանք գրելու առթիւս, վերջ տալ ուղեկով հնագիտաց տեղի և անտեղի մեկնութեանց և բացատրութեանց ֆրոլմանուան վերայ: Այլ մեք դառնամք խոսելու մի ուրիշ անուան վերայ, որ ըստ մեր կարծեաց, բոլորովին հայկական ունի տիպար, և որոյ ստուգաբանութիւն ևս ցայսօր անյայտ է, այն է կաւա, որոյ վրայ յաջորդ յօդուածով:

Շարայարեղի

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆ

ՅԱՐՆԻՄՈՒՑՈ

(Shu յ'էջ 157)

Վիլֆուայի ծանօթ երկասիրութիւնքն, նկատմամբ մեր լեզուին և մատենագրութեան, հետեւեալքն են.

1.^o Արդէն շատ անգամ մեզմէ յիշատակուած արքունի մատենադարանին մէջ գտնուած հայ ձեռագրաց ցուցակը հետեւեալ խորագրով. Catalogue des Manuscrits arméniens de la Bibliothèque de Roy; dressé en 1735, par l'abbé de Villefroy.

2.^o Remarques sur le Catalogue précédent. Idée des manuscrits les plus intéressants.

Այս երկու գրուածք՝ թարգմանեցով ի լատին հրատարակուեցան ի ցանկի գրչագրաց արքունի մատենադարանին. բայց բուն սկզբնագիրն տպագրեցաւ ի Մոնֆոլընէ ի բազմահմուտ գիրն *Bibliotheca bibliothecæ manuscriptorum, t. 1739, Հատոր Բ. յ'էջ 1015-1027. Մի'ւս այլ տպագրութիւն Մինեի, ի Nouvelle Encyclo-*